## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

**«27» հոկտեմբեր 2023թ.**

# ՀՐԱՄԱՆ N 534-Ն

«ՎԻԶ ԷՅՐ ՄԱԼԹԱ» ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «Զ» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1005-Ն որոշման N 2 հավելվածի 18-րդ կետով և հիմք ընդունելով «Վիզ էյր Մալթա» ավիաընկերության 2023 թվականի սետեմբերի 13-ի հայտը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Վիզ էյր Մալթա» ավիաընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Վիեննա/LOWW/-Երևան/UDYZ/-Վիեննա/LOWW/ երթուղով՝ 2023 թվականի հոկտեմբերի 30-ից մինչև 2024 թվականի մարտի 30-ը՝ շաբաթական 5 (հինգ) չվերթ հաճախականությամբ, Վենետիկ/LIPZ/-Երևան/UDYZ/-Վենետիկ/LIPZ/ երթուղով՝ 2023 թվականի հոկտեմբերի 30-ից մինչև 2024 թվականի մարտի 29-ը՝ շաբաթական 3 (երեք) չվերթ հաճախականությամբ, Միլան/LIMC/-Երևան/UDYZ/-Միլան/LIMC/ երթուղով՝ 2023 թվականի հոկտեմբերի 29-ից մինչև 2024 թվականի մարտի 30-ը՝ շաբաթական 4 (չորս) չվերթ հաճախականությամբ և Հռոմ/LIRF/-Երևան/UDYZ/-Հռոմ/LIRF/ երթուղով՝ 2023 թվականի հոկտեմբերի 29-ից մինչև 2024 թվականի մարտի 30-ը՝ շաբաթական 7 (յոթ) չվերթ հաճախականությամբ Հայաստանի

Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս երկու և ավելի ոչ կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություններ:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետով նախատեսված Վենետիկ/LIPZ/-Երևան/UDYZ/-Վենետիկ/LIPZ/ և Հռոմ/LIRF/-Երևան/UDYZ/-Հռոմ/LIRF/ երթուղիներով չվերթները համարվում են Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախագահի 2023 թվականի ապրիլի 28-ի N 171-Ա հրամանով տրված թույլտվությունների շրջանակներում Վենետիկ/LIPZ/-Երևան/UDYZ/-Վենետիկ/LIPZ/ երթուղով իրականացվող չվերթների շարունակությունը (ԻԱՏԱ) 2023 թվականի ձմեռային նավիգացիոն ժամանակահատվածում՝ 2023 թվականի հոկտեմբերի 30-ից մինչև 2024 թվականի մարտի 29-ը՝ շաբաթական 3 (երեք) չվերթ հաճախականությամբ և Հռոմ/LIRF/-Երևան/UDYZ/-Հռոմ/LIRF/ երթուղով իրականացվող չվերթների շարունակությունը (ԻԱՏԱ) 2023 թվականի ձմեռային նավիգացիոն ժամանակահատվածում՝ 2023 թվականի հոկտեմբերի 29-ից մինչև 2024 թվականի մարտի 30-ը՝ շաբաթական 7 (յոթ) չվերթ հաճախականությամբ, որոնք բավարարում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված պայմանների, չսպասարկված ուղղությունների և չվերթների հաճախականությունների պահանջներին և որոնց վրա տարածվում են Կոմիտեի նախագահի 2023 թվականի ապրիլի 28-ի N 171-Ա հրամանի 2-րդ կետով նախատեսված արտոնությունը:

3. Նկատի ունենալով, որ Ընկերությունը օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) ձմեռային ժամանակահատվածում 2023 թվականի հոկտեմբերի 29-ից մինչև 2024 թվականի մարտի 30-ը՝ շաբաթական 4 (չորս) չվերթ հաճախականությամբ Միլան/LIMC/-Երևան/UDYZ/-Միլան/LIMC/ երթուղով Հայաստանի Հանրապետություն տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացմամբ բավարարում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված պայմաններին, չսպասարկված ուղղությունների և չվերթերի հաճախականությունների պահանջներին՝ սույն կետում նշված Երևան/UDYZ/-Միլան/LIMC/ երթուղով մեկնող ուղևորներին տրամադրվող «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով սահմանված արտոնության սկիզբ սահմանել 2023 թվականի հոկտեմբերի 29-ը՝ ամիսների նվազման կարգով՝ մինչև 2025 թվականի դեկտեմբերի 13-ը՝ հաշվի առնելով Կոմիտեի նախագահի 2022 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 537-Ա հրամանի 3-րդ կետը:

4. Օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) ամառային ժամանակահատվածի մասով արտոնության վերաբերյալ դրույթները կսահմանվեն առանձին հրամանով՝ Ընկերության կողմից ներկայացվող հայտի հիման վրա:

5. Կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի և թույլտվությունների տեղադրումը Կոմիտեի պաշտոնական կայքէջում:

6. Կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետի պարտականությունները կատարողին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվությունների հանձնումն Ընկերությանը:

10/27/2023

X

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 227/261023
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 227/261023
TO THE FOREIGN AIRCRAFT OPERATOR FOR TWO AND MORE
CHARTER SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE REPUBLIC OF ARMENIA

| | |
|---|---|
| Օդանավ շահագործողը<br>Aircraft Operator | «Վիզ Էյր Մալթա» ՍՊԸ<br>"Wizz Air Malta" Limited |
| Charterer<br>Պատվիրատու | «Վիզ Էյր Մալթա» ՍՊԸ<br>"Wizz Air Malta" Limited |
| Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը)<br>Type(s) of aircraft(s) | A320 (320, Y180), A320 (320, Y186), A321 (321, Y230), A320neo (32N, Y186), A321neo (32Q, Y239) |
| Հաճախականությունը<br>Frequency | շաբաթական 4 չվերթ<br>4 flights per week |
| Երթուղին<br>Air route | Միլան/LIMC/-Երևան/UDYZ/-Միլան/LIMC/<br>Milan/LIMC/-Yerevan/UDYZ/-Milan/LIMC/ |
| Թույլտվության գործողության ժամկետը<br>Permission validity | 29/10/2023 մինչև 30/03/2024<br>29/10/2023 till 30/03/2024 |

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
CHAIR OF CIVIL
AVIATION COMMITTEE
MIHRAN KHACHATRYAN

10/27/2023

X

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266

27.10.2023
(տալու ամսաթիվը)
(date of issue)

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 228/261023
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 228/261023
TO THE FOREIGN AIRCRAFT OPERATOR FOR TWO AND MORE
CHARTER SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE REPUBLIC OF ARMENIA

| | |
|---|---|
| Օդանավ շահագործողը<br>Aircraft Operator | «Վիզ Էյր Մալթա» ՍՊԸ<br>"Wizz Air Malta" Limited |
| Charterer<br>Պատվիրատու | «Վիզ Էյր Մալթա» ՍՊԸ<br>"Wizz Air Malta" Limited |
| Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը)<br>Type(s) of aircraft(s) | A320 (320, Y180), A320 (320, Y186), A321 (321, Y230), A320neo (32N, Y186), A321neo (32Q, Y239) |
| Հաճախականությունը<br>Frequency | շաբաթական 7 չվերթ<br>7 flights per week |
| Երթուղին<br>Air route | Հռոմ/LIRF/-Երևան/UDYZ/-Հռոմ/LIRF/<br>Rome/LIRF/-Yerevan/UDYZ/-Rome/LIRF/ |
| Թույլտվության գործողության ժամկետը<br>Permission validity | 29/10/2023 մինչև 30/03/2024<br>29/10/2023 till 30/03/2024 |

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
CHAIR OF CIVIL
AVIATION COMMITTEE
MIHRAN KHACHATRYAN

10/27/2023

X

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266

ELECTRONIC SIGNATURE IS VALID

27.10.2023
(տալու ամսաթիվը)
(date of issue)

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 229/261023
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 229/261023
TO THE FOREIGN AIRCRAFT OPERATOR FOR TWO AND MORE CHARTER SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE REPUBLIC OF ARMENIA

| | |
|---|---|
| Օդանավ շահագործողը<br>Aircraft Operator | «Վիզ Էյր Մալթա» ՍՊԸ<br>"Wizz Air Malta" Limited |
| Charterer<br>Պատվիրատու | «Վիզ Էյր Մալթա» ՍՊԸ<br>"Wizz Air Malta" Limited |
| Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը)<br>Type(s) of aircraft(s) | A320 (320, Y180), A320 (320, Y186), A321 (321, Y230), A320neo (32N, Y186), A321neo (32Q, Y239) |
| Հաճախականությունը<br>Frequency | շաբաթական 3 չվերթ<br>3 flights per week |
| Երթուղին<br>Air route | Վենետիկ/LIPZ/-Երևան/UDYZ/-Վենետիկ/LIPZ/<br>Venice/LIPZ/-Yerevan/UDYZ/-Venice/LIPZ/ |
| Թույլտվության գործողության ժամկետը<br>Permission validity | 30/10/2023 մինչև 29/03/2024<br>30/10/2023 till 29/03/2024 |

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
CHAIR OF CIVIL
AVIATION COMMITTEE
MIHRAN KHACHATRYAN

10/27/2023

X

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266

24.10.2023
(տալու ամսաթիվը)
(date of issue)